նուրից իրան գրական-պատմական գործունէութեանը և թողից իր հայրենիքը, Դանիան, որտեղ չափազանց հալածված է եղել։ Դա այն Բրանդէսի եղբայրն է, որ դանիական պառլամէնտում թագաւորին հաւատարմութեան երդում տալու ժամանակ, հրաժարվեցաւ այդ երդումը տալ եկեղեցական ֆորմայով։

Վերջապէս ծանօթացայ և Վիրխովի (Virchow) հետ, որ յայտնի է, որպէս բնագէտ, քաղաքական գործիչ, հնագէտ, անտրոպոլոգ և հնագէտ։ Նա, պրոֆէսոր Մոմզէնի հետ միասին, հակառեակցիոնական շարժման ժամանակ ջերմ պաշտպան հանդիսացան հրէաների իրաւունքների։ Որպէս հնագէտ, նա հետաքրքրվում է և մեր երկրով։ Նա ինձ պատմեց որ իրան մի անծանօթ մարդ Վլադիկավկասից ուղարկեց մի ժողովածու հնագիտական առարկաների, որ ինքն գտել է փորումներ անելով այդ քաղաքի մօտակայքում։ Վիրխովը հրաւիրեց ինձ, որպէս կովկասեցուն, գալ իր մօտ այդ բրոնզեայ գործիքները նայելու համար։ Նա ասեց ինձ որ գիտաւորութիւն ունի այս աշունքին Թիֆլիս գնալու, հնագիտական ժողովին մասնակցելու նպատակով։ Նա նպատակ ունի անտրոպոլոգիական և էտնոգրաֆիական հետազօտութիւններ անել Կովկասի ազգութիւնների վրա, մանաւանդ գանգաթների չափումներ անել, մեր երկրի ազգերի տեղը որոշելու համար մարդկութեան ցեղերի շարքում։ Զարմանալի անխոնջ աշխատող մարդ է պրոֆէսոր Վիրխովը և էլ աւելի զարմանալի է իր բազմակողմանի գիտութիւնների և հմտութիւնների կողմից։

Մի պարոն Հէսլեր (Hessler) որ անտառապետ է (Oberförster) և որ եղել է Կովկասում որպէս էկսպերտ Սվանէթի անտառների մէջ, նորերումս հրատարակեց մի շարք յօդուածների Անդրկովկասի և նրա ազգաբնակութիւնների մասին։ Այդ յօդուածները երեւցան երեք գերմանական հրատարակութիւնների մէջ. «Schlesische Ztg.», «Rheinischer Kurier» և «Globus». Մի քանի բաներ նրա յօդուածների մէջ շատ ուշով են ներկայացրած. Մեր ազգութիւնների մասին խօսելով նա համակրութեամբ խօսում է հայերի մասին, իսկ թուրքերին հակառակ[illegible] է համարում. Վրացիների մասին խօսելով նա նրանց անուանում է «ein Volk auf dem Untergange» այսինքն մի ազգ, որ գտնվում է անկման ճանապարհի վրա։ Եւ այսպէս էլ վերջացնում է իր յօդուածներից մէկը։

Անդրէաս Արծրունի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Moniteur» լրագիրը հաղորդում է, որ մարշալ Մակ-Մահոնը ընդունեց Պարնէլլին և յայտնեց նրան իր համակրութիւնը դէպի իր նախկին հայրենակիցները, բայց միեւնոյն հրապարակապէս խառնվել իրլանդական հարցի մէջ։

—«Gaulois» լրագիրը հետեւեալ հարցն է առաջարկում կառավարութեանը. ուղի՞ղ է արդեօք, որ Գերմանիան թնդանօթներ է պատուիրել Ֆրանսիայում։ «Gaulois» լրագիրը պնդում է, որ կարող է ցոյց տալ այն առեւտրական տունը և գործարանը, որը ընդունել է այս պատուէրը, նոյնպէս կարող է ցոյց տալ այն նամակը, որի մէջ ֆրանսիական գործարանատէրի և գերմանական գեսպանութեան մէջ համաձայնութիւն է կայացել։ Ընդդիմադրական լրագիրները այս քիչ հաւատալու տեղեկութիւնից օգուտ քաղելով, պահանջում են կառավարութիւնից ծանր և անհերքելի բացատրութիւններ։

—Կ. Պոլսից գրում են լրագիրներին, մարտի 1-ից, որ Կանդիա կղզու վրա ապստամբութիւն է ծագել։ Այնտեղ գնացած թիւրքաց զօրքը շատ քիչ է յունական շարժմանը ընդդիմադրելու համար։ Տեղական միլիցիան չէզոքութեամբ է վերաբերվում ապստամբութեանը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 մարտի։ Պաշտօնապէս հաղորդում են արտաքին գործերի մինիստր Գիրսից տասը պետութիւնների մօտ եղած ռուսաց ներկայացուցիչներին ուղարկած շրջաբերականի հետեւեալ թարգմանութիւնը։ Մարտի 4-ին թագաւորը, բարձրանալով իր նախնեաց գահի վրա, ընդունեց ժառանգութիւնը և աւանդութիւնները, որոնք արդարացրած են ժամանակով, աշխատանքներով և զոհաբերութիւններով սերունդների, որոնք ստեղծեցին Ռուսաստանի անցեալը։ Այժմ Ռուսաստանը հասել է հասուն զարգացման։ Նախանձ և ատելութեան զգացմունքներ նա չունի։ Մնում է ամրացնել այդ դրութիւնը, պաշտպանել արտաքուստ, զարգացնել Ռուսաստանի ուժերը, հարստութիւնը և բարօրութիւնը։ Այդ է թագաւորի նպատակը։ Նա ամենից առաջ կը նուիրի իրան ներքին զարգացման գործին։ Արտաքին քաղաքականութիւնը խաղաղասէր կը լինի։ Ռուսաստանը հաւատարիմ կը մնայ իր բարեկամներին, անփոփոխ պահելով աւանդութիւններով արդարացրած զգացմունքները և պաշտպանելով իր դիրքը մեծ պետութիւնների շարքում, չի հրաժարվի իր կոչումից՝ միւս պետութիւնների հետ համաձայն պաշտպանել ընդհանուր խաղաղութիւնը։ Ռուսաստանը պարտաւոր է ամենից առաջ իր մասին հոգալ։ Միայն իր պատիւը և ապահովութիւնը պաշտպանելու պարտականութիւնը կարող է ընդհատել նրա ներքին աշխատանքները։ Թագաւորը կը ձգտի Ռուսաստանի հզօրութեան և բարօրութեան ամրացնելուն։ Սրանք են այն սկզբունքները, որոնք կառավարելու են թագաւորի քաղաքականութեանը։ „Правит. Вѣстн." լրագիրը հաղորդում է. Րիսակովի յանձնաբարականը նախկին հազարապետ Վօլկօնսկու կողմից հիմնվում է Չերեպովեցկի րէալական ուսումնարանի դիրեկտորի յանձնաբարականի վրա, որ ներկայացնում էր Րիսակովին երկու խիզախ աշակերտներից մէկը ամենալաւին և որի մէջ ասված է, թէ ուսումնարանի մէջ աւանդվող բոլոր առարկաներից, նոյնպէս և փորձից Րիսակովը կատարեալ թուանշաններ ունի։ Եւ այս յանձնաբարականը միակ է պաշտօնական գիտութեան ժամանակ։ Մալայա Սադովայա փողոցի մէջ եղած ականի մէջ գտնվեցան երկու բարել։ Ականի պարունակողը պիտի ծագէր գալվանական հոսանքով։ Մի չէզ հանեցին, որ լիքն էր նիտրո-գլիցերինի, ծծմբաթթու ամոնի և փայտէ ածուխի խառնուրդով։ Բացի այդ գտնվեցաւ մի ամանի մեծ մասնագոյն բաղադրութեամբ, որ լիքն էր նիտրո-գլիցերինով և ծայրերով[illegible] փամփուշտներով։ Ականի մէջ երկու փութից աւելի դինամիտ կար։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 մարտի։ „Правит. Вѣстн." լրագիրը հաղորդում է, որ մարտի 6-ին Բարձրագոյն հրաման արվեցաւ, որի համեմատ եղեռնագործութեան դատաստանը յանձնվում է մի աւագ դատարանին դատակարգերի ներկայացուցիչներով։ Այդ գործի սկզբնական քննութիւնը վերջանում է և շուտով կը յանձնվի աւագին դատարանին առանձնապէս նշանակված պրոկուրորի մեղադրական գործի հետ։ Պետերբուրգի դուման միաձայն վճռեց եղեռնագործութեան տեղը եկեղեցի կառուցանել։ „Новое Время" լրագիրը լսել է, որ քննող յանձնաժողով է նշանակված գեներալ Մրավինսկու համար, որ խուզարկել էր Կոբոզեվի բնակարանը և կարող էր եղեռնագործութեան առաջն առնել։ Ասում են, թէ նա իրան նրանով է արդարացնում, որ հանձնում էր խուզարկութիւնը քաղաքականութեամբ կատարել։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 մարտի։ Այսօր, յայտնած հանդիսին համեմատ, կայացաւ 'ի Տէր հանգուցեալ կայսրի մարմնի տեղափոխելը։ Եղանակը շատ գեղեցիկ էր։ Թափորի ժամանակ բոլոր եկեղեցիների մէջ զանգահարում էին, ամէն մի րոպէ թնդանօթներ էին արձակվում։ Արեւի տակ պայծառ փայլող ոսկէ կառքը հասաւ ամրոցին 2 ժ. 10 րոպէին։ Մօտաւորապէս 2½ ժամին թագաւորը, կայսերական Տան Անդամները և բարձրաստիճան անձինք դագաղը նորա տարան մայր-եկեղեցին։ Ազգաբնակութեան կէսից աւելի ներկայ էր յուղարկաւորութեան հանդիսին հրաժարական վերջին ողջոյն տալու համար Ազատարար-Թագաւորին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 մարտի։ Պետական յանցանքի քննութիւնը վերջացրած է այսօր երեկոյեան։ Ամբողջ քննութիւնը յանձնված է պրոկուրորի օգնական Մուրավեւին։ Մեղադրողը նա կը լինի։ Յանցաւորների նստարանի վրա կը լինեն չորս անձն. Նիկոլայ Րիսակով, Անդրէյ Ժելեաբով, Տիմօֆէյ Միխայլով և հրէուհի Գեսսի Գելֆման։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 մարտի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 75 կ., երկրորդ 93 ր., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 219 ր. 50 կ., երկրորդ 212 ր. 75 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր. 75 կ., երկրորդ 92 ր., երրորդ 91 ր. 87 կ., ոսկի 7 ր. 93 կ.։ Ռուսաց 1 րուբլ Լոնդոնի վրա արժէ 24.75 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա 211 մարկ 50 պֆ., Փարիզի վրա 261 ֆրանկ 75 սանտիմ։ Բորսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր—Հրատարակիչ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ավելի դարձրած. այս փոսերի մէջ կանաչ գտնվում է պարզ շինած արձաթեայ օղեր և բուտակներ։ Բացի հասարակ գերեզմաններից կան և գործարաններ, որոնք աւելի խոր են փորած և ներսի չորս կողմը քարեր շարած. որոնց միջից են դուրս եկել գալի արձաթեայ օղեր ու մատանիներ, բուտակներ, ապարանջաններ և մի քանի կաւեղէն ամաններ։ Այս իրեղէնների ձեւին և նախշերին նայելով կարելի է ասել, որ նրանք վերաբերում են երրորդ, չորրորդ կամ հինգերորդ դարերին Քրիստոսից յառաջ, իսկ աւելի հին՝ Արմաւրի ծագման ժամանակներին յատկացնել ոչինչ նշաններ չը կան։

Վերջապէս ամեն միջոց գործ դնելով և Արմաւրի հետքը անգամ չը գտնելով յետոյ—Ուվարովը դիմում է տեղական արձանագրութիւններին, յուսալով գտնել նրանց մէջ կարդալ այն գաղտնիքը, որ ժամանակը և բնութիւնը (երկրաշարժը և հրաբուխ վիժումները) այնպէս անողորմաբար ծածկել թաղցրել են մեզանից։—Դեռ անցեալ տարվայ «Արարատ» ամսագրի առաջին համարում հրատարակված էր երեք տողից բաղկացած մի սեպաձեւ արձանագրութիւն, որ գտնված է եղել Արմաւրի մօտ, ոչ հեռու Կարա-Քալա գիւղից։ Ուվարովի խնդրանքով պ. [illegible] ուղարկում է այդ արձանագրութիւնը Պետերբուրգի համալսարանի յայտնի պրոֆէսոր և սեպաձեւ գրութիւնների քննող Կոսսովիչին— կարդալու. բայց սա պատասխանում է, թէ այդ միայն կտոր է, հատուած է ամբողջ արձանագրութիւնից, ուստի դրանից ոչինչ չէ կարելի հասկանալ։ Այդ արձանագրութեան կտոր կամ հատուած լինելը հաստատում է և Ուվարովը, որովհետեւ նա տեսել է բնագիր քարը՝ երկու կողմից կոտրած։ Բացի այս երեք տող արձանագրութիւնից՝ մօտ 10 տարի առաջ տպվեցաւ «Արարատի» մէջ մի մեծ սեպաձեւ արձանագրութիւն (13 տող)՝ իբր թէ գտած Արմաւրի մօտ գտած. բայց թէ ինչ տեղից է հանած դա, ոչ ոք ցոյց տալ չէ կարող։ Պ. [illegible] պատմեց, ինչպէս նա գրել է Էջմիածնի «Արարատ» ամսագրին, որ մեծ եռանդով պարապում է հնագիտութեամբ և որը բացի շատ ուրիշ բնագրութիւններից գտել է և այս 13 տող արձանագրութիւնը։ Արդ [illegible] է խուզարկութեան տեղը, բայց նրանց երկար հետազօտութիւնները ոչինչ հետեւանք չեն ունենում. նրանք չեն կարողանում գտնել այն տեղը, որտեղից հանած է սրգիկ արձանագրութեան քարը. գտնել այդ կէտը կարող էր մի ակներեւութիւն անել հնութեան մնացորդների վրա—այն էլ ծածկած է անյայտութեան քողով։

Այսպէս է վերջացնում կոմս Ուվարովը իր 15 օրեայ խուզարկութիւնները Արմաւրի տեղը գտնելու։ Արդարեւ, թէպէտ նրա հետազօտութիւնները մի շօշափելի արդիւնք չեն արտադրում, բայց գոնէ բաւական միջոցով կամք կարողացաւ ապացուցանել, թէ Արմաւիրը այնտեղ չէ, ուր մինչեւ այժմ որոնում էին և որտեղ միայն տեղը ցոյց են տալիս աշխարհագրողները, ճանապարհորդները և հնագէտները։ Ուվարովի կարծիքով Արմաւիրը պէտք է որոնել [illegible], մերձաւորապէս այնտեղ, ուր այժմ կայ կազակների մի դիրքը (ПОСТЪ)։ Դանէ պատմութեանը նայելով, ասաց պ. Ուվարովը, այդ տեղը ամենից աւելի է յարմարվում Արմաւրին։

—

Բացի Արմաւրի հետազօտութիւններից, Ուվարովը պատմեց իր այցելութիւնը Գառնի քաղաքի աւերակներին. Յայտնի է, որ Գառնին հիմնած է մեր Գեղամ նահապետի ձեռքով (մօտ 1900 տարի Քրիստոսից առաջ) և գտնվում է Երեւանից 30 վերստի վրա՝ գեղջի հարաւ-արեւելեան։ Այս քաղաքը առաջ կոչվում էր Գեղամի, բայց Գառնիկ նահապետը (Գեղամի թոռը) փոխում է և տալիս է նրան իր անունը. Դանէ այսպէս է աւանդում մեր Խորենացին (Գիրք Ա. գլ. 12)։ Այնուհետեւ մինչեւ Տրդատ թագաւորի օրերը (չորրորդ դարը Քրիստոսից յետոյ) Գառնին համարեա թէ ամենեւին չէ յիշվում մեր պատմութեան մէջ. Այս թագաւորը իր քրոջ Խոսրովիդուխտի համար շինել է տալիս Գառնիի մէջ մի հոյակապ ամրոց՝ գեղեցիկ ամարանոցով և ճարտարապետներով։ Շինութիւնը հաւաքված է խոշոր որձաքար և կոփածոյ քարերից՝ ամրացած միմեանց հետ երկաթէ գամերով և արճիճով, և զարդարում է նրան սրանչելի գրչագիտութիւններով, քանդակներով և հելլենական արձանագրութիւններով։ Բայց Գառնիի այժմեան աւերակները պ. Ուվարովի կարծիքով արաբի հնարք ամենեւին չունեն, աւելի հաւանական է, որ դրանք առաջին թագաւորների լինեն։ Այս կարծիքը հաստատվում է նրանով, որ ամրոցի կամ ամարանոցի համար այդ աւերակները շատ փոքր են՝ ընդամենը 34 քառակուսի ֆուտ տեղ բռնելով։ Բացի դրանից պ. Ուվարովը գտնելով յայտնեց, որ ինքն այլեւս հելլենական արձանագրութիւն չէ նշմարել աւերակների վրա, մինչդեռ մեր բարեկամ գիտնական պ. Էմինը տեսել է այդտեղ մի արձանագրութիւն իր 1848 թուի ճանապարհորդութեան ժամանակ։—Այնուհետեւ Ուվարովը հաղորդեց, որ տաճարի մնացորդները բաւականին անվնաս են պահվել, պատերը ունեն գեղեցիկ քանդակներ, շինութիւնը բռնվում է 6 աստիճանների վրա՝ ամբողջ յոնական ճաշակով՝ սեւաքար (базальтъ) քարերից շինած։ Ճարտարապետութիւնը շատ հին է և գեղեցիկ և արժանի մանրամասն հետազօտութիւնների։

Սրանով վերջացրեց կոմս Ուվարովը իր հետաքրքրական ընթերցումը։

—

Կոմսուհուց կարծում լսել եմ, որ կոմսը՝ իր Թիֆլիս եղած ժամանակը (անցեալ տարի)—գիմել է Մեծ Իշխան փոխարքային, դրամական միջոց խնդրելով Գառնիի թանկագին աւերակները պահպանելու։ Թիֆլիսի թանգարանը (Կովկասեան մուզէյ) և այստեղ միմեանց վերաբերողներ [illegible] այնպէս, ինչպէս որ պէտք է շինած լինէր նա։ Ասում են իբր թէ Մեծ Իշխանը բարեհաճել է աւերակների տեղափոխութեան համար նշանակել 3 հազար ռուբլի։—Անհամբեր շնորհակալութիւն կոմս Ուվարովին։

Մոսկվա Գր. Խ.

Дозволено цензурою, Тифлисъ, 9 Марта 1881 года.